ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Սուրբ Զատկվա այս առավոտուն բերկրյալ սրտով կողջունենք Ձեզ այս բարի ավետիսով և կմաղթենք, որ Սուրբ Հարության լուրը Ձեզ պարգևե մշտանորոգ ոգեկան եռանդ ու կատարյալ քաջառողջություն, որպեսզի նույն նվիրումով շարունակեք Ձեր առաքելությունը՝ ի լիակատար կենսագործումն եկեղեցանվեր ուխտիդ հոգեշեն ու ազգանվեր գործունեության:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն և Մեր սրտեն կհղեմք Ձեզ Մեր եղբայրական սերն ու գնահատանքն ուխտիդ նվիրյալ միաբաններուն Մեր հայրապետական օրհնությունը:

«Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13):

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար: